ՈՉՈՔ ՉԻ ՄՈՌԱՑՎԵԼ ՈՉԻՆՉ ՉԻ ՄՈՌԱՑԵԼ

ОБЪЕДИНЕНИЕ ВЕТЕРАНОВ РА

ՎԵՏԵՐԱՆ
ВЕТЕРАН

№7-9/ 2026

ՀՀ ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



диалог
ОБЩЕСТВЕННАЯ ОРГАНИЗАЦИЯ

«ՎԵՏԵՐԱՆ» ԱՄՍԱԳԻՐ
Թողարկումը **«Մարշալ Բաղրամյանի անվան ՀՀ վետերանների միավորում»** ՀԿ-ի կողմից

Հասցե՝ ք. Երևան, Խորենացի փող. 22
Հեռախոս՝ +374 -12- 587573
Էլ. փոստ՝ 77.varm@mail.ru

«Մարշալ Բաղրամյանի անվան ՀՀ վետերանների միավորում» ՀԿ-ի

Նախագահ՝ Ս.Ն. ԵՍԱՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝ Ե. Ա. ՇՈՒՎԱԵՎԱ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Գ. Խ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Խմբագրական կազմը՝ Ա.Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ն. Գ. ԵՍԱՅԱՆ
Տ. Ի. ՅԱՆԳԱՅԿԻՆԱ

Համակարգչային ձևավորող՝ Ա.Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

ЖУРНАЛ **“ВЕТЕРАН„**
Издание Объединения ветеранов РА им. Маршала Баграмяна

Адрес: Ереван, ул. Хоренаци, д. 22
Тел: +374-12-587573
Эл. почта: 77.varm@mail.ru

Председатель Объединения ветеранов РА им. Маршала Баграмяна С. Н. ЕСАЯН

Главный редактор: Е. А. ШУВАЕВА

Заместитель главного редактора: Г.Х. СТЕПАНЯН

Редколлегия: А. С. СТЕПАНЯН
Н.Г. ЕСАЯН
Т.И. ЯНГАЙКИНА

Верстка и дизайн: А.С. АВЕТИСЯН

Типографи: Printway

Журнал издается при поддержке Министерства труда и Социальных вопросов РА, ОО «ДИАЛОГ», Автономной Некоммерческой Организации – Центр содействия просвещению и информированию Населения «Ветеранские вести».



ՀՀ ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ 70 ՏԱՐԵԿԱՆ Է

ԽՍՀՄ-ում վետերանների շարժման պատմությունը սկսվեց Հայրենական մեծ պատերազմի ավարտից հետո: Զորացրված զինվորները սկսեցին վերականգնել ազգային տնտեսությունը: Սակայն նախկին զինակիցների ռազմական բարեկամությունը կարոտ էր հանդիպումների և փոխհամագործակցության:

Հայրենական մեծ պատերազմում խորհրդային ժողովրդի հաղթանակի 10-ամյակի տոնակատարության ժամանակ սկսվեցին պատերազմի վետերաններին միավորելու աշխատանքները:

Եվ այսպես, 1956 թվականի հուլիսի 3-ին, Խորհրդային Միության մարշալ Գ.Կ. Ժուկովի առաջարկությամբ, ԽՄԿԿ Կենտկոմը որոշում ընդունեց Պատերազմի վետերանների խորհրդային կոմիտե ստեղծելու և Խորհրդային Միությունում ընդլայնելու վետերանների մասսայական հայրենասիրական շարժումը: Այս

նոր շարժման ռահվիրաները Լենինգրադի բնակիչներն էին, ովքեր 1956 թվականի սեպտեմբերի 21-ին համաժողովում որոշեցին ստեղծել պատերազմի վետերանների հասարակական կազմակերպություն: Եվ արդեն նույն թվականի սեպտեմբերի 29-ին, Առաջին համամիութենական հիմնադիր համաժողովում, ստեղծվեց Պատերազմի վետերանների խորհրդային կոմիտեն, որի նախագահ ընտրվեց Հայրենական մեծ պատերազմի ամենանշանավոր հրամանատարներից մեկը՝ Ալեքսանդր Վասիլևսկին, ԽՍՀՄ երեք մարշալներից մեկը, ով պարգևատրվել էր երկրի բարձրագույն պարգևներով՝ Հաղթանակի երկու շքանշանով:

Պատերազմի վետերանների խորհրդային կոմիտեի աճող հեղինակությունն ու ազդեցությունը, անկասկած, պայմանավորված էին նրա նախագահներով, որոնք հայտնի էին ամբողջ երկրում:

Պատերազմի վետերանների սեկցիաներ սկսեցին ձևավորվել տեղերում՝ հանրապետություններում, երկրամասերում, մարզերում և հերոս քաղաքներում:

Նախկին ԽՍՀՄ-ի հանրապետությունների հետ մեկտեղ, Հայաստանում նույնպես ստեղծվեց պատերազմի և զին ծառայության վետերանների կազմակերպություն, որը ներկայացնում էր հաղթանակածների սերունդը, ովքեր պատերազմի ժամանակ հերոսական սխրանքներ գործեցին հանուն մեր հայրենիքի ազատության և անկախության: Սկզբնական շրջանում այն կոչվեց խորհրդային վետերանների Երևանյան սեկցիա:

Արդեն 1956 թվականի հոկտեմբերին, համաժողովում, Խորհրդային Միության հերոս, գեներալ-լեյտենանտ Սարգիս Սողոմոնի Մարտիրոսյանը (1956-1968) ընտրվեց Երևանի վետերանների սեկցիայի առաջին նախագահ: Այնուհետև վետերանների այդ կազմակերպությունը գլխավորեց գեներալ-մայոր Հայկ Հովհաննեսի Մարտիրոսյանը (1968-1986), հետագայում կազմակերպությունը վերանվանվեց Հայրենական Մեծ պատերազմի ՀՀ վետերանների կոմիտե, որը նախագահեցին՝ Խորհրդային Միության հերոս, գեներալ-մայոր Աշոտ Վաղարշակի Ղազարյանը (1987-1995), ինժեներ-փոխգնդապետ Գեղամ Միքայելի Գրիգորյանը (1995-1997), այնուհետև նոր փոխություն՝ կազմակերպությունը վերանվանվեց Հայրենական Մեծ պատերազմի, թիկունքի, աշխատանքի, զին ծառայության և ներքին գործերի վետերանների միավորում, որը նախագահեցին՝ գնդապետ Պերճ Սերգեի Բոշնաղյանը (1997-2003), գեներալ-մայոր Ռաֆիկ Միքայելի Կարապետյանը (2003-2010):


2010 թվականի մայիսի 27-ին գնդապետ Սիմոն Նիկոլայի Եսայանը, որը մինչև իր ընտրությունը ՀՀ վետերանների միավորման փոխնախագահն էր, IX համագումարում միաձայն ընտրվեց ՀՀ վետերանների միավորման նախագահ:

Աշխարհի բոլոր երկրներում վետերանների շարժումը գտնվում է իրենց կառավարությունների, պետական կառույցների և բազմաթիվ հասարակական կազմակերպությունների մշտական ուշադրության կենտրոնում:

Վետերանները ավագ սերնդի ներկայացուցիչներ են, նրանք մեր ժողովրդի մարտական և աշխատանքային ավանդույթների՝ Հայրենիքի հանդեպ հավատարմորեն ծառայելու դրական փորձի կենդանի վկաներն ու կրողներն են: Այս ականավոր անհատները իրենց անմիջական պարտականությունն են համարում, իրենց քաղաքացիական պարտքը, իրենց գաղափարական և բարոյական համոզմունքները, կյանքի, մարտական և աշխատանքային փորձը փոխանցել երիտասարդ սերնդին, օգնել նրանց դառնալ ավելի նախաձեռնող, հայրենասեր և կյանքում հաստատուն քայլող անհատներ: Սա ապահովում է սերունդների անխախտ կապը՝ նպաստելով երիտասարդներին սովորելու այն մարդկանցից, ովքեր պաշտպանելով հայրենիքը, կերտել են մեր պատմությունը:

ՀՀ վետերանների միավորումը կամավորական հասարակական կազմակերպություն է: Միավորումն իր գործունեությունը իրականացնում է՝ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, միջպետական և միջկառավարական պայմանագրերով և համաձայնագրերով, այդ թվում՝ «ԱՊՀ երկրների վետերանների Կոորդինացիոն խորհրդի կազմակերպությունների համագործակցություն» միջազգային միության համակարգող խորհրդի որոշումներով, ՀՀ գործող օրենքներով և վետերանների միավորման կանոնադրությամբ:

Գայանե ՍՏԵՓԱՆՅԱՆ




АРТЕМИЙ КАЦИЯН — ЧЕЛОВЕК, КОТОРЫЙ ПЕРВЫМ ПОДНЯЛ ВЛАДИКАВКАЗ В НЕБО

В 1911 году над Владикавказом впервые поднялся в небо аэроплан. За штурвалом находился уроженец этого города — Артемий Андраникович Кациян — человек необыкновенной судьбы, в которой удивительным образом соединились авиация, живопись, фотография, театр, музыка и служение родине.

Сегодня имя Кацияна известно далеко не каждому. Между тем его биография могла бы стать сюжетом для приключенческого романа. Он был одним из пионеров российской авиации, одним из первых профессиональных лётчиков армянского происхождения, участником Первой мировой войны, лётчиком-испытателем, художником, фотографом, театральным постановщиком и преподавателем. Его жизнь вместила и авиационные рекорды, и рискованные полёты, и тяжёлое боевое ранение, и несправедливый арест, и трагическую смерть.

Находясь во Владикавказе, я посетила Национальный музей Республики Северная Осетия-Алания, где на одном из стендов увидела афишу о последнем полёте Кацияна и пропеллер его самолёта.


Гор. Георгіевскъ. Начальства.
Временный аэродромъ за городскимъ садомъ
Въ воскресенье 4-го сентября
СОСТОИТСЯ ПОСЛѢДНІЙ
ПОЛЕТЪ
ИЗВѢСТНАГО
ПИЛОТЪ-АВІАТОРА
А. А. КАЦІАНА
ПРОГРАММА:
1) Эволюція, 2) кратчайшій взлетъ, 3) продолжительность полета 4) и ВОЛЬ-ПЛАНЭ
ОСТАНОВЛЕННЫМЪ МОТОРОМЪ
Начало въ 5 часовъ вечера.
Цѣны мѣстамъ отъ 8 р. 40 к. до 20 к.
Играетъ военный оркестръ.
НЕ СОСТОИТСЯ.

На пожелтевшем листе крупными буквами написано: «В воскресенье 4-го сентября состоится последний полёт известного пилот-авиатора А. А. Кациана». Место — временный аэродром гор. Георгиевска. И ниже — программа: «Эволюция», «кратчайший взлёт», «продолжительность полёта и воль-планэ». Объявлено, что аэроплан прибудет на аэродром

с «остановленным мотором», а начало полёта назначено на пять часов вечера.

Всё говорит о том, что полёт на аэроплане стал настоящим городским событием. Но особенно интригует слово «последний». Неужели 4 сентября 1911 года был последним полётом Кацияна? Нет. Всё только началось с этого года. Старинный документ способен ввести современного читателя в заблуждение. «Последний полёт» на афише означал заключительный показательный полёт Кацияна в Георгиевске, а не последний полёт авиатора в жизни. После этого Кациян продолжал летать, более того, сохранились сведения, что 27 сентября 1911 года совершил показательный полёт в Грозном, потом он делал рекламные полёты, тем самым зарабатывая на жизнь, пока не разбил аэроплан, после этого стал лётчиком-испытателем, участвовал в Первой мировой войне и совершал боевые разведывательные вылеты.

И это делает историю афиши ещё интереснее. Вместе с тем возникает вопрос: когда же именно был совершён первый полёт? Во многих открытых источниках утверждается, что это произошло 4 сентября 1911 года над Владикавказом, с плаца Кадетского корпуса. Однако афиша как исторический документ опровергает эту версию: ведь между Владикавказом и Георгиевском — около 190 километров. Значит, либо первый полёт состоялся раньше указанной даты, либо полёт над Владикавказом случился позже… Только новые архивные находки смогут расставить точки над і в этой авиационной загадке.

От Владикавказа — к небу Европы

Артемий Кациян родился во Владикавказе в армянской семье, в семье приказчика магазина. В источниках встречаются разные варианты его имени — Артемий, Артём, Артур, а также разные даты рождения: 1880, 1882 и 1886 годы. Для очерка наиболее оправдано использовать датировку 1880–1943, которая встречается в биографических материалах о нём. Российская пресса также указывала 1880 год рождения. Также известен его псевдоним — Кацан.

Уже в юности Кациян проявил необыкновенную разносторонность. Он хорошо рисовал, интересовался лепкой и керамикой, обладал прекрасным музыкальным слухом. В гимназии его товарищем был будущий знаменитый режиссёр Евгений Вахтангов. Позднее Кациян учился живописи в Тифлисе, а затем продолжил образование в Мюнхене.

«Артур помогал отцу, зарабатывал деньги, преподавал русский язык и арифметику, рисование. По окончании гимназии в 1905 году отец устроил Артура в Тифлис, учиться живописи. Преподаватели, увидев большое дарование мальчика, направили его в Мюнхенскую академию художеств», — пишет в газете «Терские ведомости» Андрей Донченко.


Именно Германия изменила его судьбу. В начале XX века авиация была ещё совсем молодой. Человек, поднимающийся в воздух на аэроплане, рисковал жизнью практически при каждом полёте. Самолёты были несовершенными, двигатели ненадёжными, а опыт пилотов только складывался. Для современного человека самолёт — привычная часть жизни. Для людей 1910-х годов он был почти чудом. Кациян оказался среди тех, кто это чудо осваивал.

В 1908 году он поступил в Мюнхенский аэроклуб, а в 1909 году успешно сдал лётные испытания. В том же году он участвовал в авиационных соревнованиях и установил рекорд по высоте и дальности полёта. В качестве награды получил аэроплан фирмы «Граде» (Grade), который в грузовом вагоне привёз во Владикавказ. Этот самолёт впоследствии стал важнейшей частью его судьбы.

На нём Кациян совершал показательные полёты в Германии, Бельгии, Голландии и Дании. По сути, он оказался одним из профессиональных авиаторов того времени, которые не просто летали, но и демонстрировали публике возможности новой техники.

О нём говорили как о человеке смелом, азартном и волевом. Современников поражало, насколько уверенно он обращался с аэропланом. В воспоминаниях о Кацияне подчёркивается его стремление достигать предельной скорости, высоты и дальности полёта.

После обучения в Мюнхене Кациян решил вернуться домой.



Это было не просто возвращение молодого человека в родной город. Он привёз с собой то, чего жители Владикавказа прежде практически не видели: собственный аэроплан.

Сам факт перевозки самолёта по железной дороге уже звучит сегодня почти невероятно. Самолёт Кациана доставили во Владикавказ в разобранном виде. Здесь его собрали, подготовили к полётам — и произошло событие, которое вошло в историю Северной Осетии.



Когда Кациян над Владикавказом поднял аэроплан, для города это стало невиданным зрелищем. На плац Кадетского корпуса пришло огромное количество людей. Среди зрителей были представители власти, военные, городская публика.

Но техника тех лет могла подвести в самый ответственный момент. Именно это произошло перед первым полётом.

Как рассказывал друг Кациана по фамилии Татузов, перед началом полёта собралось множество народа. Прибыли губернатор и другие высокопоставленные лица. Кациян начал готовить аэроплан, но двигатель не хотел запускаться.

Толпа волновалась. Кто-то даже крикнул: «Крути, Артём, авось запустишь!» Кациян, однако, не растерялся. Он продолжал проверять двигатель, искать неисправность. В конце концов мотор заработал. А дальше произошло то, ради чего все пришли. Аэроплан разбежался по плацу и поднялся в воздух.

Впервые в истории Владикавказа над городом появился самолёт.

После нескольких кругов Кациян благополучно приземлился. Оркестр играл туш, зрители кричали «ура», друзья подхватили лётчика на руки.

Так началась история авиации Северной Осетии.

Кациян — лётчик-испытатель

Кациян стремился совершенствовать своё мастерство, интересовался техникой самолёта и постепенно переходил к более серьёзной профессиональной работе. В 1913 году Кациян

переехал в Петербург и поступил на авиационный завод Щетинина. Сначала работал мастером, а с середины 1914 года стал лётчиком-испытателем. Это была уже совершенно другая авиация. Показательный полёт перед публикой — рискованный, но всё же рассчитанный на эффект. Работа лётчика-испытателя — ещё опаснее.

Испытатель должен был поднимать в воздух машины, характеристики которых ещё не до конца известны, проверять их поведение, двигатель, управляемость и надёжность.

Кациян оказался человеком, которому доверяли такую работу.

С началом Первой мировой войны авиация приобрела совершенно новое значение. Самолёт становится военной машиной.

Кациян участвовал в боевых действиях как лётчик-разведчик и корректировщик артиллерийского огня. Он выполнял разведывательные полёты над позициями противника, передавал сведения о расположении войск и помогал артиллерии корректировать огонь.



В начале 1916 года во время разведывательного полёта самолёт получил повреждения, а Артемий — тяжёлое ранение. Однако даже раненый он сумел посадить машину на своей территории. После долгого лечения авиатор-лётчик был признан негодным к полётам. Для человека, который связал свою жизнь с небом, это было почти трагедией.

За боевые заслуги Кациян был награждён двумя Георгиевскими крестами — III и IV степени.

Кациян-живописец

Артемий Кациян снова оказался перед необходимостью начать жизнь заново. И снова он нашёл себе дело — он вернулся к живописи. Его небо сменилось холстом. Вернувшись во Владикавказ, он занялся не только живописью, но и скульптурой, художественной фотографией. Открыл собственную мастерскую — «Фотография Рембрандт».

Его картины «Коста Хетагуров», «Терек», «Чабаны изучают советскую Конституцию», «Встреча Кирова», «Убийство революционера Ноя Буачидзе», «Расстрел 26 бакинских комиссаров» хранятся во владикавказском Художественном музее имени М. Туганова.

Также Артемий Кациян активно участвовал в культурной жизни города, занимался музыкой, руководил хором, преподавал пение. Участвовал в театральных постановках на армянском языке. В частности, он работал над постановкой знаменитой оперетты «Аршин мал алан» Узеира Гаджибекова, а также участвовал в постановке «Ануш».

Так постепенно в городе появился новый образ Кацияна. Для одних он оставался знаменитым лётчиком. Для других был художником. Кто-то знал его как фотографа. Кто-то — как музыканта и руководителя хора. Кто-то мог даже не подозревать, что человек, которого он встречает в художественной мастерской, когда-то устанавливал авиационные рекорды и летал над Европой.

Одним из самых необычных эпизодов его жизни стал случай с рисунком денежной купюры. В 1922 году Кациян настолько искусно изобразил рубль, что рисунок оказался похож на настоящую купюру. История закончилась для него трагикомично: его обвинили в фальши-

вомонетничестве и приговорили к высшей мере наказания.

Но вскоре выяснилось, что обвинение не имело достаточных оснований, и Кацияна освободили.

В этом эпизоде есть почти символическая деталь. Человека едва не наказали за то, что он слишком хорошо умел рисовать. Его талант оказался настолько убедительным, что художественная копия была принята за настоящую вещь.

Человек, который снова вернулся к авиации

Однако полностью расстаться с небом Кациян всё-таки не смог. В 1934 году во Владикавказе был организован аэроклуб, и Кацияна пригласили преподавать теорию полёта. Он передавал молодым людям знания, накопленные ещё в эпоху первых аэропланов. Он выполнял тренировочные полёты на У-2.

Получается удивительная линия его жизни: сначала он сам учился летать… потом показывал полёты тысячам людей… затем стал лётчиком-испытателем… воевал в воздухе…. после ранения был вынужден оставить боевую авиацию… а спустя годы снова оказался рядом с самолётами — уже в роли наставника. Да, он был уже немолод, не мог поднять в небо аэроплан, но он мог учить других подниматься в небо.

Трагический финал

В 1943 году Кациян был арестован органами НКВД. Его обвинили в сотрудничестве с немецкой комендатурой в период оккупации села Бирагзанг. Был обвинён в работе переводчиком. Во время следствия состояние его здоровья резко ухудшилось. 12 мая 1943 года Кациян оказался в тюремной больнице. 23 мая 1943 года он умер.

Уголовное дело впоследствии было прекращено, а спустя десятилетия Кациян был полностью реабилитирован.

Так трагически закончилась жизнь человека, который когда-то был символом технического прогресса и человеческой смелости.

Память о Кацияне

Прошло много десятилетий, прежде чем имя Кацияна вновь стало широко звучать во Владикавказе.

В 2012 году на доме № 36 на нынешнем проспекте Мира во Владикавказе, где он жил, была установлена мемориальная доска. На открытии подчёркивалось, что именно Кациян первым поднял свой самолёт над городом, а вслед за его примером многие молодые люди начали заниматься авиацией.



В 2013 году на территории Владикавказского аэроклуба был установлен памятник-обелиск из красного и чёрного гранита. На нём увековечена дата: 4 сентября 1911 года. И слова о том, что уроженец Владикавказа Артур Андронникович Кациан впервые взлетел на аэроплане «Граде» с плаца кадетского корпуса и открыл эру авиации Осетии.

…


Конечно, потрясающая история. Простой армянский мальчишка из многонационального Владикавказа стал героем — первым, кто поднял родной город в небо. Лётчик, художник, учитель — он не выбирал между дарованиями, а соединял их в одной жизни. Его имя должно звучать громче. Потому что такие люди — основа нашей истории и символ дружбы народов.

Уверена: мы ещё далеко не всё знаем об Артемии Кацияне. Сколько фактов, документов, воспоминаний ждут своего часа в архивах и семейных альбомах. Стоит искать, говорить, восстанавливать справедливость — чтобы эта жизнь не осталась в тени. Кациян достоин целого неба!

Елена ШУВАЕВА
Dialogorg.ru

Фото — из Национального музея Республики Северная Осетия-Алания и открытых источников Интернет.

«ХОЧУ ПРИЕХАТЬ В ЕРЕВАН»: 100-ЛЕТНИЙ ВЕТЕРАН ИЗ ВЛАДИКАВКАЗА ГОТОВИТСЯ К ПОЕЗДКЕ В АРМЕНИЮ



Советник организации «ДИАЛОГ» и главный редактор журнала «ВЕТЕРАН» Елена Шуваева во Владикавказе встретилась с ветераном Великой Отечественной войны Арутюном Гургеновичем Хачикяном, который в феврале 2026 года отметил свой 100-летний юбилей.

Сейчас Арутюн Гургенович проходит лечение в одной из больниц Владикавказа. Елена Шуваева навестила ветерана, передала ему свежий номер журнала «Ветеран» — официального издания Объединения ветеранов Армении имени маршала И. Х. Баграмяна, партнёра организации «ДИАЛОГ», — и побеседовала с ним.

Елена пожелала Арутюну Гургеновичу скорейшего выздоровления и пригласила его в Ереван.

О поездке в Армению ветеран мечтал давно. Свой 100-летний юбилей он хотел отметить на исторической родине, однако приехать в феврале не удалось — дорога через Ларс была заснежена. Теперь Арутюн Гургенович планирует совершить поездку в октябре.

И это будет особенный месяц: Объединение ветеранов Армении — одна из старейших общественных организаций страны — отметит свое 70-летие. Если планы осуществятся, в Ереване состоится сразу два важных события: юбилей организации и 100-летие Арутюна Гургеновича.

Желаем ветерану скорейшего выздоровления и надеемся увидеть его в Ереване уже этой осенью!

ԽՍՀՄ ՌԱԶՄԱԾՈՎԱՅԻՆ ՆԱՎԱՏՈՐՄԻ ԾՈՎԱԿԱԼ, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՏԵՓԱՆԻ ՏԵՐ-ԻՍԱՀԱԿՅԱՆ

(ԻՎԱՆ ՍՏԵՓԱՆԻ ԻՍԱԿՈՎ)



Իվան Ստեփանի Իսակովը (Հովհաննես Ստեփանի Տեր-Իսահակյան) ունի հարուստ արցախյան արմատներ, թեև ծնվել է Արցախից դուրս՝ Կարսի մարզում: Նա ծնվել է 1894 թվականի օգոստոսի 22-ին Կարսի մարզի Հաջիքենդ գյուղում (Ռուսական կայսրություն, այժմ՝ Թուրքիայի տարածքում): Հայրը՝ Ստեփան Եգորի Տեր-Իսահակյանը, եղել է ճանապարհային հաղորդակցության ինժեներ: Նրա տոհմը սերում է Արցախի պատմական Ջրաբերդի մելիքությունից՝ այժմյան Մարտակերտի շրջանից: Իսակովի նախնիների հայրենի օջախը Արցախի Ծմակահող գյուղն է: Նրա պապը՝ Եգոր Տեր-Իսահակյանը, տեղափոխվել է Կարսի մարզ այն բանից հետո, երբ Արևելյան Հայաստանը միացվել է Ռուսական կայսրությանը: Նա վաղ է մահացել, ինչից հետո երեխաների դաստիարակությամբ զբաղվել է մայրը և քեռին: Մայրը՝ Իդա Անտոնի Լաուերը, ունեցել է էստոնական արմատներ:

Ծովակալի իսկական ազգանունը Տեր-Իսահակյան է: Ռուսական ռազմական ուսումնարան ընդունվելիս և ծառայության ընթացքում այն ձևափոխվել ու ռուսականացվել է դառնալով «Իսակով»: Նրա տոհմական պատմությունը սերտորեն կապված է հայկական զինվորական ավանդույթների հետ: Ջրաբերդի տոհմական զինվորական ոգին մեծ ազդեցություն է ունեցել Իսակովի և նրա եղբայրների կյանքի ընտրության վրա: Նրա քեռին՝ Պյոտր Լաուերը, նույնպես եղել է ռուսական բանակի սպա և կարևոր դեր է խաղացել ապագա ծովակալի դաստիարակության գործում:

Հովհաննես Տեր-Իսահակյանը (Իվան Իսակով) ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի ծովակալ էր, Խորհրդային Միության հերոս: Նա ղեկավարել և ծրագրել է Բալթյան և Սևծովյան նավատորմերի, այդ թվում՝ Լենինգրադի պաշտպանության և Կովկասի համար մղված ռազմական գործողությունները՝ չնայած ծանր վիրավորումներին ու անդամահատմանը:

1914-1918թթ. նա ծառայել է Բալթյան նավատորմում, մասնակցել գերմանական նավատորմի դեմ մղված մարտերին: Աչքի է ընկել Հելսինգֆորսից Կրոնշտադտ իրականացված հայտնի «Սառցե արշավանքի» և Մոնզունդի ճակատամարտի ժամանակ:

1928 թվականին Իսակովն ավարտել էր Լենինգրադի ռազմածովային ակադեմիայի բարձրաստիճան հրամանատարական կազմի կատարելագործման դասընթացները, 1932 թվականից դարձել էր Լենինգրադի ռազմածովային ակադեմիայի օպերատիվ արվեստի ամբիոնի պրոֆեսոր և դասավանդել այդ ուսումնական հաստատությունում՝ մինչ բալթյան նավատորմի հրամանատար նշանակվելը: Որպես դասախոս և ռազմագիտության տեսաբան ու պատմաբան՝ նա իր ժամանակի մեծ մասը հատկացրել է ռազմածովային տակտիկաների և ստրատեգիաների մշակմանը, որոնք արդյունավետորեն կիրառվել են Երկրորդ աշխարհամարտի ժամանակ նացիստական Գերմանիայի դեմ մղված մարտերում: 1938 թվականին ստացել է լեյտենանտ-գնդապետի կոչում և նշանակվել ռազմածովային գլխավոր վարչությունների ղեկավար:

1939-1940թթ. Խորհրդա-ֆիննական պատերազմի ժամանակ Իսակովը համակարգել է Բալթյան նավատորմի և Կարմիր բանակի գործողությունները: 1940 թվականին նա ստացել է ծովակալի կոչում:

1941-1945թթ.՝ Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ, որպես Հյուսիսարևմտյան և Հյուսիսկովկասյան ռազմաճակատների գլխավոր հրամանատարի տեղակալ ու ռազմական խորհրդի անդամ՝ նա մեծ ավանդ է ունեցել ծովափնյա պաշտպանության կազմակերպման գործում: Նա մեծագույն ներդրում է ունեցել Բալթյան և Սեծովյան ռազմական նավատորմների մարտական գործողությունների պլանների մշակման, ցամաքային զորքերի օժանդակման ու էվակուացման, ծովափնյա պաշտպանության կազմակերպման, ծովային ու ցամաքային ուժերի գործողությունների համակարգման գործում:

1941թ. հոկտեմբեր - Շլիսելբուրգի մոտ կոնտուզիա է ստացել՝ կորցնելով ձախ ականջի լսողությունը:

1942թ. հոկտեմբեր - Տուապսեի պաշտպանության ժամանակ ծանր վիրավորվել է, ինչի հետևանքով անդամահատվել է նրա ձախ ոտքը:

Տևական բուժումից ու ապաքինվելուց հետո՝ 1943 թվականի մայիսին, վերադարձել է ակտիվ ծառայության և ստանձնել Ռազմածովային ուժերի (ՌԾՈւ) գլխավոր շտաբի պետի պաշտոնը: Նա հետագայում զբաղեցրել է ՌԾՆ նախարարի տեղակալի և ԽՍՀՄ պաշտպանության նախարարության գլխավոր տեսուչի պաշտոնները: 1945 թվականին ծովակալ Իսակովը ընդգրկվել է ֆաշիստական Գերմանիայի կապիտուլյացիայի պայմանները մշակող կառավարական հանձնաժողովի կազմում:

Հայրենական Մեծ պատերազմից հետո ևս հերոս հայորդին բարձր պաշտոններ է զբաղեցրել: Նա զբաղվել է նաև գիտահետազոտական աշխատանքներով՝ ուշադրության կենտրոնում պահելով ռազմա-տեսական ու ռազմա-պատմական հարցերը, խորհրդային ռազմածովային նավատորմի զարգացման հեռանկարների ուսումնասիրությունը:

1946 թվականի փետրվարին Իսակովը, ազատվելով ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի ժողկոմի առաջին տեղակալի պաշտոնից, նշանակվել է ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի գլխավոր շտաբի պետ-ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի գլխավոր հրամանատարի տեղակալ, 1947 թվականի փետրվարին՝ ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի գլխավոր հրամանատարի տեղակալ՝ պատերազմական փորձը ուսումնասիրելու և կիրառելու գծով, 1950 թվականի փետրվարին՝ ԽՍՀՄ ռազմածովային նախարարի տեղակալ: 1954 թվականի հոկտեմբերից մինչև 1955 թվականի դեկտեմբեր ամիսը պաշտոնավարել է որպես ԽՍՀՄ ծովային նախարարի տեղակալ և այդ նախարարության տեխնիկական կոմիտեի նախագահ: 1956 թվականի փետրվարին նշանակվել է ԽՍՀՄ պաշտպանության նախարարությունում հատուկ հանձնարարությունների պաշտոնակատար, 1957 թվականի ապրիլին՝ այդ նախարարության ռազմական գիտության գծով գիտական խորհրդատու, 1958 թվականի ապրիլին՝ այդ նախարարությունում կազմավորված գլխավոր տեսուչների խմբի անդամ:

1947 թվականին Հովհաննես Իսակովին շնորհվել էր ռազմավարության և օպերատիվ ռազմարվեստի պրոֆեսորի կոչում: Նա պատասխանատու պաշտոններ վարելու հետ մեկտեղ, շատ էր զբաղվում հասարակական ու գիտական աշխատանքներով: 1947-1955 թվականներին եռահատոր «Ծովային ատլաս»-ի կոթողային հրատարակության պատասխանատու խմբագիրն էր, աշխատանք, որի համար արժանացավ Ստալինյան մրցանակի: Հեղինակել է աշխարհագրության,

օվկիանոսագիտության, ռազմի պատմության բնագավառների մի ամբողջ շարք գիտական աշխատություններ (նրա առաջին գիտական հոդվածը դեռևս 1922 թվականին լույս էր տեսել «Ծովային ժողովածու» ամսագրում): Որպես ռազմա-պատմական խորհրդատու՝ մասնակցել է «Սևաստոպոլի պաշտպանությունը» պանորամայի վերականգնման աշխատանքներին: 1958 թվականին նա ընտրվել է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, 1967թ.՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ:

1947 թվականից նա Ռուսական աշխարհագրական ընկերության անդամ էր, 1954-1957 թվականներին՝ ԽՍՀՄ ԳԱ նախագահությանն առընթեր օվկիանոսագիտության հանձնաժողովի աշխատակից, իսկ 1958 թվականից՝ այդ հանձնաժողովի նախագահի տեղակալ, 1955-1958 թվականներին՝ ԽՍՀՄ ԳԱ տրանսպորտային համալիր պրոբլեմների ինստիտուտի գիտխորհրդի անդամ: Հանդիսացել է նաև ԽՍՀՄ Նախարարների խորհրդի գիտության և տեխնիկայի պետական կոմիտեի՝ օվկիանոսների ու ծովերի հետազոտման և դրանց ռեսուրսների օգտագործման նպատակով ստեղծված գիտական խորհրդի անդամ, «Океанология» ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ (1961-1967թթ.):

Հովհաննես Իսակովը հեղինակել է պատմական ու գեղարվեստական երկեր, 150-ից ավելի գիտական աշխատություններ, 1964թ. դարձել է ԽՍՀՄ գրողների միության անդամ: Եղել է «Ծովակալ Ուշակով» և «Ռազմանավերը գրոհում են ամրոցները» պատմա-գեղարվեստական կինոնկարների գլխավոր խորհրդատուն:

«Զորքերը հմտորեն ղեկավարելու, գերմանա-ֆաշիստական նվաճողների դեմ պայքարում արիություն, խիզախություն, հերոսություն դրսևորելու համար և ի նշանավորումն Հայրենական մեծ պատերազմում խորհրդային ժողովրդի տարած հաղթանակի 20-ամյակի» կապակցությամբ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1965 թվականի մայիսի 7-ի հրամանագրով Հովհաննես Իսակովին շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում:

Հովհաննես Իսակովն ընտրվել է ԽՍՀՄ առաջին գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր (1937-1946թթ.): Եղել է պատերազմի վետերանների խորհրդային կոմիտեի անդամ (1956-1967թթ.), գիտության և հայտնագործությունների բնագավառում Ստալինյան մրցանակներ շնորհող կոմիտեի անդամ (1947-1951թթ.):

Հովհաննես Ստեփանի Տեր-Իսահակյանը (Իվան Ստեփանի Իսակովը) մահացել է 1967 թվականի հոկտեմբերի 11-ին՝ Մոսկվայում, թաղվել է Նովոդևիչյան գերեզմանատանը:

Հովհաննես Իսակովի գրչին են պատկանում 100-ից ավելի աշխատություններ, որոնց մի մասը հրատարակվել է մի քանի անգամ և թարգմանվել օտար լեզուներով: Դեռևս 1928 թվականին լույս է տեսել նրա «Գիշերային ականազերծում» աշխատությունը, որտեղ ընդհանրացված էր դարասկզբի ռուս-ճապոնական և Առաջին համաշխարհային պատերազմի փորձը:

1932-1933 թվականներին նա մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմի պատմության փաստաթղթերի ժողովածուներ կազմելու և խմբագրելու աշխատանքներին: 1933 թվականին Պետերբուրգում լույս են տեսել Ա. Ալեքսանդրովի, Հ. Իսակովի և Վ. Աբելինի «Սուզանավերի ռազմական գործողությունները» մեծածավալ աշխատության երկու հատորները:

1936 թվականին Իսակովի հրատարակած «1914թ. Ճապոնացիների գործողությունները ընդդեմ Ցինդաոյի» ուսումնասիրությունը համարվում է ռազմածովային արվեստի պատմության կարևոր նվաճումներից մեկը]: 1937 թվականին նա այդ աշխատությունը պաշտպանել է որպես գիտական ատենախոսություն և ստացել է ռազմական գիտությունների դոկտորի աստիճան:

Իսակովի «ԽՍՀՄ ռազմածովային նավատորմը Հայրենական պատերազմում» ծավալուն աշխատությունը թարգմանվել է մի քանի լեզուներով և մինչև այժմ օգտագործվում է ռազմածովային ակադեմիաներում որպես դասագիրք: Դասագրքեր են հանդիսանում նաև Իսակովի «Ռազմածովային նավատորմի հրամանատարի տեղեկատու», «Ուղեցույց ծովային ռազմական գործողությունների համար», «ԽՍՀՄ ռազմածովային ուժերի մարտական կանոնադրությունը» և այլ աշխատություններ: 1950-ական թվականներին լույս տեսած «Ծովային ատլաս»-ի հատորները խոշոր ներդրում էին համաշխարհային ծովագնացության և պատմաաշխարհագրական գիտությունների բնագավառում:





Կոչումներ

1944 թվականի մայիսի 31-ին Իսակովին շնորհվել է նավատորմի ծովակալի կոչում: Նա արժանացել է բազմաթիվ մրցանակների ու պարգևների: 1965 թվականին Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 20-ամյակի առթիվ նրան շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում: ԽՍՀՄ գիտությունների ակադեմիան մի խումբ նշանավոր ակադեմիկոսների առաջադրմամբ 1958 թվականի Հովհաննես Իսակովին ընտրել է թղթակից անդամ: Նույն թվականին Մեքսիկայի ռազմական հետազոտությունների ակադեմիան նրան ընտրել է պատվավոր անդամ, իսկ 1967 թվականի մարտին ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը Իսակովին ընտրել է Հայաստանի ակադեմիայի պատվավոր անդամ: 1958 թվականից Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի օվկիանոսագիտության կոմիտեի անդամ է եղել:

Զինվորական կոչումներ

- **1-ին դասի կապիտան (31.05.1936թ.)**
- **2-րդ դասի ֆլագման (01.09.1937թ.)**
- **1-ին դասի ֆլագման (17.02.1938թ.)**
- **Ծովակալ (04.06.1940թ.)**
- **Նավատորմի ծովակալ (31.05.1944թ.)**
- **Խորհրդային Միության նավատորմի ծովակալ (03.03.1955թ.):**

Գայանե ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ /ՍՏԵՓԱՆ ԱՆԱՍՏԱՍԻ ՄԻԿՈՅԱՆ/

1922 թվականի հուլիսի 12 ...

Այս օրը հիշում ենք Ստեփան Անաստասի Միկոյանին՝ նշանավոր հայ օդաչուին, Խորհրդային Միության հերոսին, փորձարկող օդաչուին և ավիացիայի գեներալ-լեյտենանտին, Խորհրդային Միության բանակի վաստակավոր փորձարկող օդաչուին, տեխնիկական գիտությունների թեկնածուին:

Ստեփան Միկոյանը ծնվել է Թիֆլիսում: Ավարտել է Կաչինսկի Ա.Մյասնիկյանի անվան կարմրադրոշ ռազմանավիացիոն դպրոցը, իսկ 1951 թվականին ավարտել է Ն.Ժուկովսկու անվան ռազմաօդային ինժեներական ակադեմիան:

Որպես օդաչու, ավագ օդաչու, ապա օղակի հրամանատար մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին՝ Արևմտյան, Դոնի և Հյուսիսարևմտյան ռազմաճակատներում, ինչպես նաև Մոսկվայի սահմանապահ զորքերի կազմում:

1942 թվականի հունվարի 6-ին Միկոյանը սխալմամբ հարված է ստացել խորհրդային օդաչու Միխայիլ Ռոդիոնովի կողմից: Ատեփան Անաստասովիչին հաջողվել է վայրէջք կատարել, սակայն դրանից հետո նրան ձեռքի և դեմքի 3-րդ աստիճանի այրվածքներով տեղափոխել են հիվանդանոց: Կես տարի անց նա նշանակումով տեղափոխվել է Ստալինգրադի, ապա՝ Հյուսիսարևմտյան ռազմաճակատ օդաչուի իր հայրենանվեր պարտականությունը կատարելու համար: 1942 թվականի հոկտեմբերին Միկոյանը իրականացրել է 14 մարտական թռիչք: Անցկացրել է 3 օդային մարտեր, խմբի կազմում կործանել է հակառակորդի 6 ինքնաթիռ: 1944 թվականի օգոստոսին 12-րդ գվարդիական կործանիչ ավիացիայի հրամանատար Ստեփան Միկոյանը պարգևատրվել է Կարմիր Աստղի շքանշանով:

Պատերազմից հետո էլ նա շարունակել է թռիչքները՝ 1951թվականից որպես ռազմական փորձարկող օդաչու, 1959 թվականից՝ կործանիչ ինքնաթիռների ավագ փորձարկող օդաչու:

Ստեփան Միկոյանի կինը՝ Էլեոնորա Պյոտրի Միկոյանը (Լոզովսկայա) մասնագիտությամբ լրագրող էր, բանասաեր: Որդիներից մեկը՝ Վլադիմիրը կենսաֆիզիկ էր, իսկ մյուսը՝ Ալեքսանդրը, երաժիշտ: Դուստրը՝ Աշխենը, շարունակել է մոր մասնագիտությունը՝ բանասեր էր:

Ստեփան Անաստասի Միկոյանը Մահացել է 94 տարեկան հասակում՝ 2017 թվականի մարտի 24-ին Մոսկվայում:



Պարգևները

- Ժուկովի մեդալ
- «1941-1945թթ. Հայրենական Մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալ
- Կարմիր դրոշի շքանշան
- Լենինի շքանշան
- Կարմիր Աստղի շքանշան
- Խորհրդային Միության հերոս
- Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշան
- «Մարտական ծառայությունների» մեդալ
- «Մոսկվայի պաշտպանության համար» մեդալ
- Մեդալ «Ստալինգրադի պաշտպանության համար»
- «Աշխատանքի վետերան» մեդալ
- «Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 60-ամյակի» հոբելյանական շքանշան
- «1941-1945թթ. Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 50-ամյակ» հոբելյանական շքանշան
- «Մոսկվայի 850-ամյակի հիշատակի» մեդալ
- «Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 65-ամյակ» հոբելյանական շքանշան:

Գայանե ՍՏԵՓԱՆՅԱՆ



АРМЕНИЯ — МОРДОВИЯ: КНИГА КАК МОСТ МЕЖДУ СТРАНАМИ, НАРОДАМИ И ПОКОЛЕНИЯМИ

В культурном центре «ДИАЛОГ» в Ереване состоялась презентация книги Татьяны Ивановны Янгайкиной «Армения — Мордовия: межкультурное взаимодействие и диалог культур». На встречу в Армению приехала сама автор — российский учёный-этнолог, этнограф, арменист, кандидат филологических наук, сотрудник Научно-исследовательского института гуманитарных наук при Правительстве Республики Мордовия в Саранске.

в своеобразную встречу людей, которых объе диняют история, культура, наука, память и искренний интерес к судьбам народов. В зале собрались представители армянской общественности, деятели культуры, представители духовенства, общественных и национальных организаций, исследователи, журналисты и люди, которым небезразлична история армянской диаспоры за пределами исторической родины. Особого внимания заслуживает участие творческих коллективов из Арцаха, которые были созданы или возрождены при поддержке организации «ДИАЛОГ».

И, пожалуй, главным словом этого вечера стало слово «диалог». Оно вынесено в название книги, но в стенах «ДИАЛОГА» приобрело ещё и вполне конкретное человеческое содержание. Здесь говорили не только о научных фактах, архивных документах и этнографических исследованиях. Говорили о людях, которые уезжали далеко от родной земли, создавали семьи, строили дома, работали, сохраняли язык, веру и традиции, становились частью новой среды — и при этом не переставали помнить о своих корнях.

Именно такой взгляд и предлагает книга Татьяны Янгайкиной: увидеть в истории диаспоры не абстрактную статистику, а судьбы конкретных людей. Согласно исследованиям, Татьяны Ивановны первый армянский след в Мордовии датируется 1924 годом.

Исследовательский интерес Татьяны Янгайкиной к армянской культуре и армянской диаспоре в Мордовии возник не случайно. Как рассказывает сама автор, важной отправной точкой стало знакомство в Саранске с представителем армянской диаспоры Ишханом Джанибеговичем Чахояном. Эта встреча впоследствии стала для исследователя своеобразным импульсом к глубокому и многолетнему изучению жизни армян в Мордовии.

Так началась работа, которая постепенно вышла далеко за пределы одного знакомства. Друзья, родственники, коллеги, случайные собеседники, представители армянской общины открывали перед учёным новые страницы истории. Вместе с ними в поле её исследования вошли семейные архивы, фотографии, документы, личные воспоминания и семейные реликвии.

Исследование представляет собой синтез научного и публицистического материала. Оно основано на многолетних архивных, статистических и полевых изысканиях автора, результатах этнографических экспедиций, проведённых по районам Республики Мордовия, анализе опубликованных источников и научной литературы. Такой подход позволяет соединить два уровня повествования: большую историю и историю отдельной человеческой судьбы.

Книга имеет и вполне серьёзную научную историю. Исследование «Армения — Мордовия: межкультурное взаимодействие и диалог культур» было представлено на Втором международном конкурсе по арменоведению имени академика Н. Я. Марра. Работа Татьяны Янгайкиной была отмечена специальным дипломом. Организаторы конкурса подчеркнули актуальность исследования армянского сообщества Мордовии, его роли в экономической и культурной жизни региона, а также необходимость изучения отношений между диаспорой и принимающим обществом. Рецензентом книги выступил — доктор филологическх наук, профессор Г. С. Асатрян, а научным консультантом — доктор исторических наук, кандидат географических наук Ю.С. Путрик.

Сегодня исследование уже получило форму отдельного издания. В каталоге Российского НИИ культурного и природного наследия имени Д. С. Лихачёва книга указана как электронное сетевое издание объёмом 180 страниц, опубликованное в январе 2026 года. А недавно в Ереване вышло её второе, уже печатное издание, презентация которого и состоялась в КЦ «Диалог».

Выход второго издания в Армении особенно символичен. Исследование, посвящённое жизни армянской общины далеко от исторической родины, возвращается в Армению — к той культуре, которую автор на протяжении многих лет изучает, документирует и стремится представить через судьбы конкретных людей. Сам факт появления нового печатного издания свидетельствует о том, что тема оказалась востребованной и продолжает вызывать интерес у читателей, исследователей и представителей армянской общественности.

Для самой Татьяны Ивановны эта работа стала не эпизодом, а продолжением многолетнего научного пути. Она занимается не только арменистикой, но и исследует духовную и материальную культуру народов Мордовии, мордовское языкознание, этнографию и межэтнические отношения. Янгайкина является автором более ста научных публикаций, участвовала в подготовке энциклопедических материалов о Мордовии и мордовских языках, а с 2011 года работает в Научно-исследовательском институте гуманитарных наук при Правительстве Республики Мордовия.

Но вернёмся к книге… Что происходит с культурой народа, когда он оказывается далеко от исторической родины? Как сохраняются язык, вера, традиции и семейная память? Что происходит с идентичностью через одно, два, три поколения? И возможно ли одновременно сохранить собственную культурную самобытность и стать полноценной частью другого общества?

Именно эти вопросы лежат в основе книги.

Армянскую диаспору в Мордовии Янгайкина представляет как часть сложного поликультурного пространства, в котором различные народы взаимодействуют, влияют друг на друга, сохраняют свою уникальность и одновременно создают новые формы совместной жизни.

«Взаимодействие и диалог культур как наиболее благоприятная основа развития межэтнических, межнациональных и межконфессиональных отношений особенно актуальны в современных этнополитических и этносоциальных условиях», — подчёркивает Татьяна Янгайкина.

Для многонациональной Мордовии эта тема особенно важна. Регион исторически является пространством сосуществования различных культур, языков и традиций. Поэтому изучение армянской общины здесь позволяет увидеть более широкий процесс формирования культурного пространства современной России.

Одна из сильных сторон исследования Янгайкиной заключается в том, что за научными понятиями — «диаспора», «этническая идентичность», «межкультурная коммуникация», «адаптация» — постоянно возникают живые человеческие лица. Это особенно заметно в тех материалах, которые посвящены семейному наследию. Как отмечается в материалах книги, через живую память семей и родов становятся видимыми духовные связи поколений и смыслы исторических событий. Такой метод особенно важен для изучения диаспоры. Официальные документы далеко не всегда могут рассказать о том, что действительно происходило внутри семьи. Иногда одна фотография, старое письмо или устный рассказ оказывается не менее значимым историческим источником, чем архивный документ. Семейная память становится частью большой истории.

Особое место в её работах, как уже отмечалось выше, занимает история Ишхана Чахояна — потомственного армянского обувщика, который продолжил традиционное ремесло уже в Мордовии. Отдельное исследование, посвящённое Чахояну, было опубликовано в журнале «Наследие веков» в 2022 году. Автор рассматривает, каким образом традиционное армянское ремесло смогло существовать и развиваться в иной этнокультурной среде и в условиях современного общества.

Это наглядный пример того, что культура диаспоры существует не только в праздниках, национальной кухне, музыке или религиозных обрядах. Она существует и в ратном труде.

Отдельное направление научной деятельности Татьяны Янгайкиной связано с исторической памятью о Великой Отечественной войне и участием армян в общей борьбе.

На презентации председатель Объединения ветеранов Республики Армения имени маршала И.Х. Баграмяна Симон Николаевич Есаян особо



отметил, что Татьяна Янгайкина занимается не только историей армянской диаспоры, но и изучает вклад армян в годы Великой Отечественной войны, а также отношения взаимопомощи и дружбы между армянами, русскими и мордвинами.

Эта работа имеет большое значение именно сегодня, когда память о событиях прошлого постепенно становится всё более зависимой от того, какие истории будут переданы следующему поколению.

Янгайкина сотрудничает с журналом «Ветеран», который является официальным изданием ветеранской организации и партнёром организации «ДИАЛОГ», и входит в его редакционную коллегию. В публикациях она обращается к архивным материалам и ранее малоизвестным страницам истории, связанным с армянскими солдатами и офицерами, их боевым путём и взаимодействием с представителями других народов.

Именно за вклад в сохранение исторической памяти, развитие армяно-российского гуманитарного сотрудничества, укрепление дружбы между народами и многолетнее сотрудничество с журналом «Ветеран» Татьяне Ивановне была вручена благодарность от Объединения ветеранов Армении имени маршала И. Х. Баграмяна и редакции журнала.

В благодарности отдельно подчёркивается, что её исследования помогают сохранять историческую правду, развивать гуманитарные связи между Арменией и Россией и способствуют патриотическому воспитанию молодого поколения.

На презентации прозвучало немало слов о научной ценности исследования. Однако, пожалуй, особенно эмоциональным стало выступление представителя грузинской общины, поэта, переводчика и общественного деятеля Нино Спандерашвили.

Для неё книга Татьяны Янгайкиной — это не просто научное исследование. Это работа о людях, истории, культуре и тех невидимых духовных связях, которые соединяют народы и поколения.

Нино Спандерашвили подчеркнула, что за каждой страницей книги чувствуется уважение автора к человеку, его исторической памяти и национальной идентичности.

«Татьяна показывает, что культура — это не граница между народами, а мост. И именно такие мосты сегодня особенно нужны нашему миру», — сказала она.

Эти слова, пожалуй, наиболее точно передают атмосферу презентации.

Также символично, что на презентации книги об армяно-мордовском взаимодействии звучала и тема армяно-грузинских связей. Нино Спандерашвили отметила, что Татьяна Янгайкина стала важным связующим звеном между грузинской общиной Армении и армянской общиной Мордовии.

На первый взгляд география здесь кажется сложной: Мордовия, Армения, Грузия. Но если смотреть на неё не как на карту, а как на пространство человеческих связей, всё становится гораздо проще: один человек знакомится с другим… один культурный проект приводит к следующему. Исследователь знакомится с представителями общины. Представители одной общины знакомятся с другой. Возникают совместные инициативы, дружба, сотрудничество, новые исследования. Собственно говоря, именно благодаря таким живым связям Фонд армянской культуры, созданный много лет назад писателем Аревшатом Авакяном, обрел свой постоянный дом — культурный центр «ДИАЛОГ». Нино вспоминает: когда фонд лишился крыши над головой, она поделилась этой бедой с Татьяной. Та помогла обратиться к председателю «ДИАЛОГА», известному общественному деятелю Юрию Людвиговичу Навояну. И теперь под крышей этого центра гармонично сосуществуют и дополняют друг друга сразу несколько культур.

Нино также рассказала о помощи Янгайкиной в передаче её стихотворного поздравления великому художнику и скульптору Зурабу Церетели к его 90-летию. Для неё этот эпизод стал важным личным событием.

Получается удивительная цепочка: книга об армянской диаспоре в Мордовии приводит автора в Армению; в Армении она знакомится с представителями грузинской общины; возникают новые культурные связи; а затем эти связи начинают работать уже далеко за пределами первоначальной темы исследования.

Именно так культура и распространяется — не только через книги, но и через людей.

Интерес Татьяны Янгайкиной к Армении за последние годы заметно расширился. Её исследования, статьи и очерки публикуются в различных научных и общественно-культурных изданиях. Она также занимается изучением темы армянских молокан-мордвы. А в 2025 году она стала призёром VI Международного литературного конкурса «Армянские мотивы» — проекта организации «ДИАЛОГ», заняв третье место за очерк «Мордовские “лорды” с “поля армянских чудес” И. Д. Чахояна».

Это обстоятельство тоже интересно: исследователь, работающий с научным материалом, постепенно обращается к литературно-публицистической форме. И это вполне закономерно.

Безусловно, этнография — наука, рожденная на стыке нескольких дисциплин. Однако здесь критически важно не просто фиксировать факты, но и уметь по-настоящему услышать человека. Порой человеческая судьба никак не вмещается в сухие академические формулировки — её необходимо именно рассказать.

В очерках Янгайкиной именно человек оказывается в центре повествования. Через биографию одного героя она показывает культурную традицию, через историю одной семьи — судьбу общины, через отдельный предмет — целый мир. Это делает её работы доступными не только специалистам, но и широкому читателю.

В этом смысле особенно символично и само место проведения презентации — культурный центр «ДИАЛОГ».

В последние годы культурные инициативы всё чаще становятся важным инструментом гуманитарных связей. Книга, выставка, концерт, научная конференция, показ фильма или встреча представителей разных общин могут выполнять ту же объединяющую функцию, что и официальные дипломатические площадки, только на другом — человеческом уровне.

Презентация книги Татьяны Янгайкиной объединила российский регион и Армению, научное сообщество и общественные организации, ветеранов и деятелей культуры. Ещё раз отмечу, что гостями мероприятия стали представители армянской, грузинской, а также молоканско-мордовской общин.



В завершение презентации гости смогли задать Татьяне Ивановне интересующие их вопросы. Обсуждение переросло в живой диалог о самой книге, её главных героях, методах исследования и будущих научных планах автора. Финальным аккордом мероприятия стала автограф-сессия.

Презентация книги Татьяны Янгайкиной в Ереване завершилась вручением автору благодарностей. Советник организации «ДИАЛОГ» Елена Шуваева вручила Татьяне Ивановне благодарность от председателя Юрия Навояна за плодотворное сотрудничество, значительный личный вклад в укрепление дружественных связей между Республикой Мордовия и Республикой Армения, развитие межнационального диалога, изучение истории и современного положения армянской диаспоры на научном уровне, сохранение культурно-исторического наследия, а также за активную общественную и просветительскую деятельность.

Алёна ДАНДИНА



ՀԱՅ ԱՍՏՂԱԳԵՏ ԵՎ ԱՍՏՂԱՖԻԶԻԿՈՍԸ

/ՎԻԿՏՈՐ ՀԱՄԱԶԱՍՊԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ/



Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, ԽՍՀՄ և ՌԴ Պետական մրցանակների դափնեկիր, Հայաստանի Ազգային հերոս, աշխարհում 24 գիտությունների ակադեմիաների և 15 գիտական կազմակերպությունների անդամ, աստղագետ և աստղաֆիզիկոս, տեսական աստղաֆիզիկայի սովետական դպրոցի հիմնադիր Վիկտոր Համազասպի Համբարձումյանը ծնվել է Թիֆլիսում 1908 թվականի սեպտեմբերի 18-ին: Հայրը՝ Համազասպ Համբարձումյանը եղել է իրավաբան, թարգմանիչ, գրականագետ: Մայրը՝ Հռիփսիմեն, Ցխինվալիի քահանա Տեր-Սահակ Խախանյանցի դուստրն էր:

Համազասպ Համբարձումյանը նկատելով 3-4 տարեկան որդու՝ Վիկտորի թվերի նկատմամբ ունեցած մեծ հետաքրքրությունը, նա ավելի լրջորեն է զբաղվել զավակով՝ զարգացնելով նրա բնատուր բնագիտական ձիրքը: Դպրոցական տարիներին առավել ցայտուն են դրսևորվել մաթեմատիկայի և աստղագիտության նկատմամբ նրա հակումները: Այդ տարիներին արդեն հրապարակային դասախոսություններ է սկսել կարդալ ֆիզիկայի և աստղագիտության խնդիրների վերաբերյալ:

1924 թվականին 15-ամյա Համբարձումյանը Երևանի պետական համալսարանում, ինչպես նաև Թիֆլիսում, անվանի պրոֆեսորների, դասախոսների, ուսանողների և աշակերտների համար դասախոսություն է կարդացել Ալբերտ Էյնշտեյնի հարաբերականության տեսության վերաբերյալ, որն ընդունվել է մեծ հետաքրքրությամբ:

1924 թվականին Վիկտորն ընդունվել է Լենինգրադի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկա-մաթեմատիկական բաժինը: Մեկ տարի անց նա տեղափոխվել է Լենինգրադի պետական համալսարան:

1926 թվականին, տակավին ուսանող, նա հրատարակել է իր առաջին գիտական հոդվածը՝ նվիրված արեգակնային ջահերին: Ուսանողական տարիներին տպագրել է ավելի քան 15 հոդված: Համալսարանն ավարտելուց հետո, 1928-1931 թվականներին Վ. Համբարձումյանն ուսանել է Պուլկովոյի աստղադիտարանի ասպիրանտուրայում:

1934 թվականին Լենինգրադի համալսարանում չորս տարի աշխատելուց հետո, Համբարձումյանը հիմնադրել և ղեկավարել է ԽՍՀՄ առաջին աստղաֆիզիկայի ամբիոնը:

1935 թվականին Համբարձումյանին շնորհվել է ֆիզմաթ գիտությունների դոկտորի աստիճան՝ առանց ատենախոսության պաշտպանության, ինչը նրա գիտական մեծ հեղինակության և համաշխարհային համբավի և վաստակի արդյունքն էր:

1939 թվականին ընտրվել է ԽՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ, և նշանակվել ԵՊՀ պրոռեկտոր՝ գիտակազմակերպչական աշխատանքների գծով: 1943 թվականին հիմնադրվել է Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիան, որի փոխնախագահ է ընտրվել Վ.Համբարձումյանը: 1947 թվականից եղել է Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր, 1947 թվականին ընտրվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ՝ փոխարինելով Հովսեփ Օրբելուն: Այդ պաշտոնում վերընտրվել է մինչև 1993 թվականը:

1947 թվականին Վիկտոր Համբարձումյանը հրատարակել է իր հայտնի աշխատանքը՝ «Աստղերի էվոլյուցիան և աստղաֆիզիկան», որում ապացուցել է, որ իր հայտնագործած աստղային համակարգերը՝ աստղասփյուռները, կազմված են միանման աստղերից, և դրանով է պայմանավորված նմանատիպ աստղերի բարձր խտությունը: Ըստ Համբարձումյանի ստացած արդյունքների՝ աստղասփյուռների տարիքը չէր կարող գերազանցել մի քանի տասնյակ միլիոն տարին: Եզրակացվել է նաև, որ նույն աստղասփյուռի բոլոր աստղերն առաջացել են միասին: Դրանով իսկ ապացուցվել է, որ մեր Գալակտիկայում աստղառաջացման պրոցեսը շարունակվում է, և ծեր աստղերի հետ միասին գոյություն ունեն նաև երիտասարդ աստղեր: Այս աշխատանքի համար Վ. Համբարձումյանը 1950 թվականին արժանացել է պետական մրցանակի:

